

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԸ ԵՒ ՄՈՆՂՈՒՆԵՐԸ

Նստակեաց եւ քոչուորական քաղաքակրթութիւնների
փոխյարաբերութիւնների հարցի շուրջ

Ժամանակակից Կովկասի ամենայատկանշական կողմերից մէկը տարածաշրջանի ընդգծուած փոխյարաբերակցական բնոյթն է: Ասիայի եւ Եւրոպայի միջեւ ընկած Կովկասն այն անցումային տարածաշրջանն է, որտեղ մշտապէս բազմակողմանի փոխշփումների եւ՝ փոխազդեցութիւնների մէջ են գտնուել ամենատարբեր պետական ու քաղաքական աւանդոյթներ, հասարակական յարաբերութիւններ, տնտեսաձեւեր, էթնոսներ ու դաւանութիւններ: Հետեւաբար՝ տարածաշրջանում առաջին հերթին աչքի են ընկնում տարբերութիւններն ու այլազանութիւնները:

Հետազոտողները յաճախ են արձանագրել նաեւ կովկասեան երկրների ու ժողովուրդների միջեւ պատմականօրէն առաջացած ընդհանուր մտայնութեան երեւոյթների, հոգեբանական ընկալումների եւ կենցաղային մշակոյթի տարրերի առկայութիւնը: Զանազան վարկածներ են առաջ քաշուել այն բնութագրելու համար:

Կովկասագիտութեան մէջ առաջինն ակադեմիկոս Նիկողայոս Մառն էր, որ առաջարկեց այդ ընդհանրութիւններն ու նմանութիւնները կոչել «կովկասեան մշակութային աշխարհ» հաւաքական անուանումով: Անուանի գիտնականն առաջին հերթին նկատի էր ունեցել վաղ միջնադարեան դարաշրջանը, երբ Հայաստանը, Վրաստանը եւ Աղուանքը միասնաբար էին դիմագրաւում հզօր հակառակորդների՝ Հռոմէական կայսրութեան եւ Սասանեան Պարսկաստանի ճնշմանը՝ պաշտպանելով իրենց ինքնատիպութիւնը¹:

1 МАРР, Н.Я., *Кавказский культурный мир и Армения*, Ереван, 1995, стр. 15-103, ՄՈՒՐԱԴԵԱՆ Պ., *Կովկասեան մշակութային աշխարհը եւ Հայաստանը*, «Պատմա-քանասիրական հանդէս», 1996, 1-2, էջ 117-135:

Արաբների յայտնուելը տարածաշրջանում հիմք դնելով խալամի տարածմանը եւ աւելի խայտաբղէտ դարձնելով կովկասեան խճանկարը, այնուամենայնիւ հիմնովին չփոխեց Հարաւային Կովկասի քրիստոնէական ժողովուրդների միասնական զարգացման ընթացքը: Պետականութեան վերածնունդը Հայաստանում եւ Վրաստանում, Բագրատունիների զոյգ տոհմաճիւղերի գլխաւորութեամբ, նշանաւորում էր նաեւ վերադարձ դէպի համատեղ կեցութեան ու սերտ համագործակցութեան ժամանակներ:

Կովկասեան մշակութային աշխարհում նոր երեւոյթներ սկսուեցին ժԱ. դարում²: Աւելի քան մէկուկէս հազարամեակ անց՝ տարածաշրջանը կրկին ենթարկուեց քոչուորների նոր զանգուածային ներխուժմանը: Պատահական չէ, որ հայերն ու վրացիները, հնագոյն ժամանակների յիշողութեամբ, նրանց անուանեցին «Սկիւթականք» եւ ապա միայն «ազգն թուրքաց Սարչուկիք»³: Անակնկալի եկած տեղաբնիկ հեղինակները զարմանքով են նկարագրել ինչպէս քոչուորների մարտավարութիւնը, այնպէս էլ արտաքին տեսքը եւ տնտեսավարութիւնը:

Յաջորդ դարերի իրականութիւնից պարզ դարձաւ, սակայն, որ քոչուորների ներհոսքը տարածաշրջան՝ ոչ միայն կանգ չառաւ, այլեւ աստիճանաբար նոյնիսկ աւելի ուժգնացաւ: Այն շարունակուեց առնուազն մինչեւ ժԵ. դարի վերջերը, ընդ որում դէպի արեւմուտք շարժման մէջ աստիճանաբար ներգրաւուեցին Կենտրոնական Ասիայի նորանոր շրջաններ: Իրանը, որը դարեր շարունակ կանգնեցնում էր քոչուորների շարժումը Կենտրոնական Ասիայից դէպի Կովկաս ու Փոքր Ասիա, արաբական նուաճումից յետոյ այնքան էր թուլացել, որ յետագայում կարողացաւ ընդամէնը հարուածները մեղմացնողի դեր կատարել, այն էլ միայն սելջուկ-թուրքերի պարագայում: Հետեւաբար, կովկասեան մշակութային աշխարհը չէր կարողանում ուշքի գալ կրած արհաւիրքներից, աստիճանաբար նուազում էր կովկասեան ժողովուրդների քաղաքակրթական ներուժը: Միայն Իրանի միաւորումն ու հզօրացումն էր, որ ժԶ. դարի սկզբին վերջ տուեց քոչուորների դէպի արեւմուտք շարժմանը:

2 МУРАДЯН, П.М., *Новое в “Кавказском культурном мире” в XI-XIII веках, “Кавказ и Византия”,* вып. 4, Ереван, 1984, стр. 142-158:

3 ՄԽԻԹԱՐ ԱՆՆՅԻ, *Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց*, Աշխատասիրութեամբ ՄԱՐԳԱՐԵԱՆ, Հ., Երևան, 1983, էջ 104:

Քոչուորական զանգուածի էթնիկական կազմի, քաղաքական, հասարակական, տնտեսական ու մշակութային զարգացման աստիճանի նոյնիսկ հպանցիկ վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ իւրաքանչիւր նոր ներխուժման մասնակցում էին կենտրոնական Կովկասի համեմատաբար խորքային շրջանների՝ մինչ այդ նստակեաց երկրագործական քաղաքակրթութեան հետ փոխազդեցութիւններից ի սպառ հեռու մնացած նորանոր ցեղեր: Միաժամանակ աճում էր քոչուորական ցեղերի ներխուժումների յաճախականութիւնը, տեղական ժողովուրդներին զրկելով ուժերը վերականգնելու հնարաւորութիւնից: Հետեւաբար, Կովկասեան մշակութային աշխարհի շրջանակների մէջ եկուորների ընդգրկումը բախում էր անյաղթահարելի խոչընդոտների: Այս ամէնի հետեւանքով ուժեղանում էր նստակեաց երկրագործական քաղաքակրթութեան եւ քոչուորական զանգուածի առճակատումը՝ իր կնիքը դնելով Կովկասեան մշակութային աշխարհի զարգացման յետագայ ընթացքի վրայ:

Մոնղոլների յայտնուելը կտրուկ վատթարացրեց աշխարհաքաղաքական իրադրութիւնը Կովկասում: Սովորական երեւոյթ դարձան ոչ միայն մոնղոլների, այլեւ թուրքալեզու քոչուորների նորանոր խմբերի ներթափանցումն ու հաստատուելը Կովկասում՝ աւելի ամրապնդելով թուրք-սելջուկների ու նրանց ազգակից ցեղերի քաղաքական դիրքերը: Քոչուորների նոր զանգուածները կործանիչ հարուածներ հասցրեցին նաեւ տնտեսութեանը: Նրանց հոտերի սեզոնային աւերիչ տեղաշարժերը քայքայման եզրին հասցրեցին տեղական տնտեսութեան առաջատար ճիւղերը, յատկապէս դաշտավարութիւնը եւ այգեգործութիւնը: Տարածաշրջանի աշխարհաքաղաքական կացութիւնը յատկանշող կարեւորագոյն բնութագրական գիծը դարձաւ այն հանգամանքը, որ Կովկասեան մշակութային աշխարհը հարկադրուած էր դիմակայել քոչուորական ժողովուրդների ստեղծած կայսրութիւնների ճնշմանը: Դրանք երիտասարդ տէրութիւններ էին, որոնք կայծակնային արագութեամբ ստեղծւում էին, քոչուորական բազմաթիւ ու տարացեղ զանգուածների բուռն տեղաշարժերի ու ներխուժումների հետեւանքով ու վաղանցուկ էին. տրոհւում ու անհետանում էին նոյնպիսի թափով, ինչպիսի ուժգնութեամբ եւ առաջացել էին: Կենտրոնական իշխանութեան դիրքերը այդ պետութիւններում խախտւում էին եւ մեծապէս պայմանաւորուած էին պետութեան ղեկավար-առաջնորդի անձնական յատկանիշներով ու խարիզմայով: Այսպէս, Հարաւային Կովկասը, Իրանը եւ յարակից ընդար-

ձակ շրջաններն ընդգրկող մոնղոլական պետութիւնը՝ իլխանութիւնը ներքուստ թոյլ էր, քանի որ իլխանը ստիպուած էր համակերպուել տարբեր քոչուորական ցեղերի ինքուրոյնութեան հետ: Ուստի եւ իլխանութիւնը ԺԴ դարի կէսերին փուլ եկաւ, ընդ որում զգալի չափով նաեւ ներքաղաքական ցնցումների ու գահակալական կռիւների հետեւանքով: Կովկասեան մշակութային աշխարհի համար առաւել մեծ վտանգ էին ներկայացնում ոչ թէ քոչուորների միասնական տէրութիւնները, որոնք սահմանակափակ չափով նպաստում էին «խաղաղութեան եւ շէնութեան» հաստատմանը ընդարձակ տարածքներում, այլ նորաստեղծ կայսրութիւնների փլուզումն ու որպէս հետեւանք յաջորդած քաղաքական քաոսը:

Հետեւաբար, մոնղոլների քաղաքական գերիշխանութեան աւելի քան մէկդարեայ դարաշրջանը անհրաժեշտ է բաժանել մի քանի, ընդ որում եկուորների եւ տեղաբնիկների փոխյարաբերութիւնների տեսանկիւնից երբեմն բաւականաչափ տարբեր փուլերի: Կովկասի նստակեաց քաղաքակրթութեան ճակատագրում ողբերգական նշանակութիւն ունեցան մոնղոլական գլխաւոր արչաւանքին յաջորդող տարիները՝ մասնաւորապէս 1236-1244 թուականները: Գրեթէ մէկ տասնամեակ ընդգրկող այդ տարիների ընթացքում է, որ համատարած բնոյթ էին ընդունել թալանն ու կողոպտւոյն, կործանուեցին ծաղկուն քաղաքները, անդառնալիօրէն ոչնչացուեցին բազում մշակութային արժէքներ:

Նուաճուած ժողովուրդների մեծ մասի, այդ թւում հայերի եւ վրացիների, համար աւելի ծանր աղէտ էր բուն մոնղոլական լծի հաստատումը եւ շահագործման հիւծիչ համակարգի երկարատեւ կենսագործունէութիւնը: Սակայն մոնղոլները միանգամից չէ, որ հաստատեցին իրենց ծանր տիրապետութիւնը նորանուաճ տարածքներում: Խանգարիչ հանգամանքներից էին դեռեւս շարունակուող պատերազմները, վարչական ու հարկային պաշտօնէութեան եւ առհասարակ պետական ապարատի՝ դեռեւս ձեւաւորման փուլում գտնուելը: Ուստի մոնղոլական արչաւանքների արհաւիրքների առաջին տասնամեակին յաջորդեցին համեմատաբար մեղմ տարիները, երբ նուաճուած երկրների հարստահարումը դեռեւս այնքան համակողմանի չէր դարձել, որպէսզի անշրջելիօրէն քայքայէր գրաւուած տարածքների տնտեսութիւնը եւ խորացնէր նստակեաց կովկասեան քաղաքակրթութեան ճգնաժամը: Մոնղոլների յայտնուելուց յետոյ, սկզբնական շրջանում Հիւսիս-արեւելեան Հայաստանում շրջադարձային տեղաշարժեր տեղի

չունեցան: Մոնղոլական տիրապետութեան առաջին տասնամեակների ընթացքում Հիւսիս-արեւելեան Հայաստանի աւատատէրերի վիճակը կտրուկ փոփոխութիւնների չենթարկուեց, քանի որ, ի տարբերութիւն Հարաւային Հայաստանի, այստեղ հարկահանութիւնը կենտրոնացած էր տեղական իշխանների ձեռքում⁴: Հիւսիս-արեւելեան Հայաստանում նոյնիսկ շարունակուեցին շինարարական աշխատանքները, տնտեսական բաւականին բարձր ակտիւութիւն էր դիտւում:

Հարաւային Կովկասի քրիստոնէական պետական կազմաւորումների համար առաւել բարենպաստը ԺԳ. Ղարի 40ական թուականների երկրորդ կէսից 50ական թուականների կարճատեւ ժամանակահատուածն էր, երբ արդէն աւարտուել էին սոսկալի աւերածութիւններով ուղեկցուող մոնղոլական գրաւումները, եւ մոնղոլները ձեռնամուխ էին եղել գլխաւորապէս մահմեդական երկրների նուաճմանը: Այս ժամանակահատուածում առաւել խորացաւ եկուորների՝ հայերին ու վրացիներին պարտադրած ռազմական ու քաղաքական համագործակցութիւնը, որը քոչւորական ու նստակեաց քաղաքակրթութիւնների փոխազդեցութեան մէջ մտնելու հազուադէպ օրինակներից մէկը կարելի է համարել: Գրաւած երկրների նախկին տիրակալներին հանդուրժելու եւ սեփական նպատակներին ծառայեցնելու մոնղոլական ուղեգիծը չեչտակիօրէն տարբերւում էր նախորդ քոչւոր նուաճողների՝ սելջուկ-թուրքերի որդեգրած գործելակերպից, որը բացառում էր տեղական իշխողների ազդեցութեան նոյնիսկ մասնակի պահպանում: Աւելին, մինչեւ Ղազան խանի (1295-1304) օրօք մահմեդականութեան ընդունումը՝ մոնղոլական վերնախաւը համակրական վերաբերմունք էր դրսեւորում քրիստոնէայ հպատակների նկատմամբ, մինչդեռ մահմեդականների հանդէպ նրա դիրքորոշումը յաճախ անհանդուրժողական էր⁵: Յայտնի է, որ քրիստոնէայ հոգեւորականները բարձր դիրք ունէին մոնղոլական տարբեր տիրակալների արքունիքներում, եւ այդ առումով աչքի էին ընկնում նաեւ հայերը: Նրանք եռանդուն գործունէութիւն էին ծաւալել ինչպէս մոնղոլների մայրաքաղաք Կարակորումում, այնպէս էլ Ոսկէ Հորդայի տիրակալներ Բաթու խանի (1227-1253)

4 ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Ա., Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան, գիրք Ա, Երևան, 1957, էջ 228:

5 BAUSANI, A., Religion under the Mongols in The Cambridge History of Iran, vol. 5, Cambridge, 1968, p. 538:

եւ նրա որդի Սարթախի (1255-1256) արքունիքում⁶։ Անշուշտ՝ դիւանագէտների, իշխանների, հոգեւորականների նախապատրաստական աշխատանքները խնդրի միայն մի կողմի արտացոլումն էին։ Այդ բոլոր ջանքերը կարող էին ապարդիւն անցնել, եթէ չտեղաւորուէին մոնղոլ նուաճողների ռազմաքաղաքական ծրագրերում։ Ուրջան էլ չափազանցութիւն թուայ՝ թերեւս անհիմն չէ այն կարծիքը, որ մոնղոլները բոլոր հպատակ ժողովուրդների շարքում առաւել բարեացակամ դիրք էին բռնել հենց հայերի նկատմամբ⁷։ Յատկապէս մոնղոլական տիրապետութեան սկզբնական փուլում նուաճողների հետապնդած հեռահար նպատակներն առանձին դէպքերում հնարաւորութիւն էին ընձեռում հայ-մոնղոլական համագործակցութեան, իսկ Կիլիկեան Հայաստանի պարագայում՝ նաեւ դաշինքի հաստատման համար։

Մոնղոլական միջավայրում ամենաաչքի ընկնող դիրքը պատկանում էր ռազմաքոչուորական աւագանուն, հետեւաբար հպատակ ժողովուրդների վերնախաւի բարձրացման միակ ուղին ռազմական յաջողակ ծառայութիւնն էր։ Հայ եւ վրացի իշխաններն առաջին անգամ մասնակցեցին մոնղոլների ձեռնարկած արշաւանքներին 1242-1243 թուականներին, երբ Բաչու նոյինի հրամանատարութեամբ ջախջախիչ հարուածներ հասցուեցին Իկոնիայի սելջուկեան սուլթանութեանը։ Մոնղոլական նուաճումների յաջորդ փուլը եւս, որն սկսուեց 1256ին՝ Հուլաու իլխանի (1256-1265) իրան եւ Հարաւային Կովկաս գալով, իրականացուեց հայկական ու վրացական զորաշուկատների մասնակցութեամբ։ Հայ իշխաններից Սադուն Բ. Մահկանաբերդցին այնպիսի համբաւ էր վաստակել Հալէպի համար մղուած մարտերում, որ այդ մասին յատուկ յիշատակում է Ռաշիդ Ադ-Դինը⁸։ Հայ իշխանների ռազմական ծառայութիւնն իլխանների բանակում առօրեայ երեւոյթ էր դարձել եւ ժամանակակիցները իրենց համակրանքը չահած հայ իշխաններին բնութագրելիս շեշտում էին նրանց

6 ԽԱԶԻԿԵԱՆ, Լ., Արտագի հայկական իշխանութիւնը եւ Ծործորի դպրոցը, «Քամբեր Մատեմադարանի», քիւ 11, Երեւան, 1973, էջ 126-130։

7 CAHEN, C., *Pre-Ottoman Turkey*, London, 1968, p.326: Իրականութեան հետ ոչ մի կապ չունի հեղինակի այն պնդումը, թէ հայերն «սկզբից եւեթգիտակցաբար դարձել են մոնղոլների գործակալները»։

8 РАШИД АД-ДИН, *Сборник летописей*, т. III, Москва-Ленинград, 1946, стр. 49-50։

զօրքի բազմութիւնն ու ռազմական կարողութիւնները⁹։ Այդ յատկանիշներն էին, որ նոր պայմաններում թոյլ էին տալիս արժանանալու մոնղոլ նուաճողների բարեհաճութեանը։ Իլխանութիւնում իշխանութեանը տիրացած ռազմական աւագանին, որը թշնամի էր նստակեաց կեանքին եւ, ի տարբերութիւն սելջուկեան ժամանակաշրջանի, լիովին խզել էր կապերը անցեալի հետ¹⁰, բնականաբար աջակցում էր սոցիալական պատկանելութեան ու դերի առումով իրեն հոգեհարազատ տարրերին։

Մոնղոլների հարկային լուծի ծանրացումով եւ բնակչութեան անխնայ հարստահարման սաստկացումով սկիզբ առաւ քոչուորական եւ երկրագործական քաղաքակրթութիւնների իրական բախումը։ Արդէն ժ.դ. դարի 60-70ական թուականներին տեղական աւատատէրերից շատերը հարկադրուած էին վաճառահանել հայրենական կալուածքները։ Խորանում էր տնտեսական ճգնաժամը տարածաշրջանում։ Ժ.դ. դարի 80-90ական թուականներին իլխանութիւնը ակնբախ պատերազմական անյաջողութիւններ կրեց, ի յայտ եկան վերահաս անկման ախտանշանները։ Ժ.դ.-ժ.դ. դարերի սահմանագիծը ճակատագրական պահ էր իլխանութեան պատմութեան մէջ։ Ղազան խանի կառավարման տասնամեայ շրջանից կարճ ժամանակ անց, արտաքին ու ներքին դրութեան կայունացման փորձերի ձախողումից յետոյ, սկսուեց իլխանութեան գահավէժ անկումը, որը շարունակուեց մինչեւ ժ.դ. դարի կէսերը։ Իլխանութեան պատմութեան այս նոր, եզրափակիչ փուլում որոշ ժամանակ թէեւ շարունակուեց տարանցիկ առեւտրի վերելքը, բայց եւ միաժամանակ բարձրակէտին հասաւ Հարաւային Կովկասի տեղական բնակչութեան հիմնական զանգուածի ու նուաճողների հակամարտութիւնը։

Հոգեվարքի այս բաւականաչափ երկարատեւ ժամանակաշրջանում անվերջ կռիւները գահի տարբեր յաւակնորդների միջեւ եւ իլխանութեան անհեռանկարային պատերազմները Ոսկէ Հորդայի եւ Եգիպտոսի մամլուքեան սուլթանութեան դէմ՝ ծայրաստիճան ծանր անդրադարձան Կովկասեան մշակութային աշխարհի կենսունակութեան վրայ։ Հայ իշխանական տների մեծ մասը

9 ԽԱՉԻԿԵԱՆ, Լ., ժ.դ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակաբաններ, Երեւան, 1950, էջ 65։

10 LAMBTON, A., *Continuity and Change in Medieval Persia. Aspects of Administrative, Economic and Social History. 11th -14th Century*, London 1988, pp. 25-26.

հարկադրուած եղաւ ընդմիշտ թողնել պատմական ասպարէզը, իսկ Վրացական թագաւորութիւնը, դիրքերի կայունացման երեք տասնամեակ շարունակուած ժամանակահատուածից յետոյ, փաստօրէն տրոհուեց այսպէս կոչուած «պրովինցիալ թագաւորութիւններ»:

Անդրադառնանք նաեւ երկու քաղաքակրթութիւնների փոխազդեցութեան ասպարէզում սոցիալական, տնտեսական ու մշակութային գործօնների խաղացած դերին:

Մոնղոլների յայտնուելուց յետոյ էական տեղաշարժեր տեղի ունեցան նաեւ հասարակական յարաբերութիւնների համակարգում: Գլխաւոր պատճառն այն էր, որ նախորդ դարերում գլխաւոր հարստութիւն դիտուող հողը կորցրել էր նախկին արժէքը: Նոր, «ի դառն ժամանակի» համընդհանուր տարածում էր ձեռք բերել «Հայրենիքն արժան էր, եւ ոսկին թանգ» բնութագրումը¹¹: Հետեւաբար, խոշոր վաճառականները, որոնք կարեւոր դեր էին կատարում միջազգային առեւտրում, ինչպէս նաեւ զբաղւում էին

11 Ա.Ի.Ա.ԳԵԱՆ Ս., ՋԱՆՓՈԼԱԴԵԱՆ, Հ., *Դիւան հայ վիմագրութեան*, պրակ VI, Երեւան, 1977, էջ 71: 1283ին փորագրուած վիմագրում Ումեկի որդի Ճարը յայտնում է, որ հայրը ժամանակին գնել է «գԳետիկ ի ԽԻ կարմիր դուկատի», մինչդեռ իմքը ձեռք է բերել «գՅուվս իւր ամէն սահմանաւ... ի ԴԻ կարմիր դուկատ»: Յ. Մանանդեանի դիտարկմամբ, արձագրութիւնում նկատի են առնուած իտալական ոսկեայ դուկատները (տե՛ս ՄԱՆԱՆԴԵԱՆ, Յ., *Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան*, «Երկեր», հտ. Գ, Երեւան, 1977, էջ 277), մինչդեռ հանրայայտ է, որ առաջին ոսկեայ դուկատները հատուել են Վենետիկում միայն 1284ին: Ինչպէս ցոյց է տուել Ս. Աւագեանը, Գետիկի առեւտրականութիւնը տեղի է ունեցել 1242-1250 թուականներին (տե՛ս Ա.Ի.Ա.ԳԵԱՆ, Ս., *Նորայայտ վիմական արձանագրութիւն Ումեկեան տոհմի մասին*, «Վիմագրական պրպտումներ», Երեւան, 1986, էջ 107), հետեւաբար իտալական դուկատների յիշատակութիւնը նոր Գետիկի 1283ի արձանագրութիւնում բացառւում է: Ակնյայտ է, որ Ճարը նկատի է ունեցել Կոստանդին Ժ. Դուկաս (1059-1067) կայսեր հատած ոսկեայ դրամը՝ բիզանդական դուկատը, որը յիշատակում է դեռեւս Գրիգոր Բակուրեանի նշանաւոր «Սահմանում» (տե՛ս ШАНИДЗЕ, А., *Грузинский монастырь в Болгарии и его Типик*, Тбилиси, 1971, стр. 334): Հողի արժեգրւումը սկիզբ էր առել արդէն 1250ական թուականներին: «Հայրենիքն արժան էր, եւ ոսկին թանգ» արտայայտութեան վրացական համարժէքը՝ «ոսկին թանկ էր, իսկ գիւղը էժան», հանդիպում է դեռեւս 1259ի վրացական մի փաստաթղթում: Տե՛ս Վրաստանի պատմութեան ակնարկներ, հտ. Գ., Թբիլիսի, 1979, էջ 588 (վրացերէն):

հարկերի կապալառութեամբ ու վաշխառուական գործարքներով, մեծապէս ամրապնդեցին իրենց դիրքերը տարածաշրջանի աւանդական հասարակական կառուցուածքում: Մասնաւորապէս, առեւտրավաշխառուական հզօր գերդաստանները ընդարձակ կալուածքներ ձեռք բերեցին եւ անգամ խնամիական կապեր հաստատեցին ազդեցիկ իշխանական տների հետ, որն աննախադէպ երեւոյթ էր: Հայ խոշոր վաճառական Շադին-շնորհաւորն այնքան աչքի ընկնող դեր էր կատարում միջազգային տարանցիկ առեւտրում, որ նոյնիսկ քաղաքական դիրք էր ձեռք բերել: 1259-1261 թուականներին, մոնղոլների դէմ ուղղուած հայ-վրացական երկրորդ ապստամբութեան ժամանակ մոնղոլները Շադինին էին վստահել Տփղիսի, ինչպէս նաեւ ողջ վրացական թագաւորութեան ղեկավարումը: Քանի որ ապստամբութեան ճնշումից յետոյ էլ՝ մինչեւ 1265ը, մոնղոլները խիստ վերահսկողութեան տակ էին պահում նրա ղեկավար վրաց թագաւոր Ուլու Դաւթին, ապա 1259-1265 թուականներին Շադինը գլխաւորում էր Գիւրջիստանի վիլայեթի՝ Արեւելեան Վրաստանի եւ Հիւսիս-արեւելեան Հայաստանի քաղաքացիական կառավարումը¹²:

Սպասելի էր, որ քոչւորական ու նստակեաց քաղաքակրթութիւնները սերտ փոխազդեցութեան մէջ մտնէին հենց տնտեսական ոլորտում, քանի որ միջնադարեան պատմութեան մէջ առաջին անգամ մէկ պետութեան սահմանների մէջ էին ընդգրկուել խաղաղ ուժիւնոսից մինչեւ Միջերկրական ծով ու Եւրոպա ընկած հսկայական տարածաշրջաններ: Եւ իրօք, այսպէս կոչուած «մոնղոլական գլոբալիզացիայի» արդիւնքում կտրուկ աճեց հայ վաճառականութեան դերը: Նրա գործունէութեան աշխարհագրական սահմաններն աննախադէպ չափերով ընդլայնուել էին եւ ձգւում էին Կենտրոնական Ասիայից ու Վոլգեան Բուլղարիայից մինչեւ Ղրիմ ու եւրոպական երկրներ: Պէտք է նշել, սակայն, որ հայ առեւտրավաշխառուական եւ անգամ մեծատոհմիկ ազնուականութեան շերտերը սերտ փոխփոխման եւ փոխազդեցութիւնների մէջ էին մտնում ոչ թէ մոնղոլական ռազմաքոչւորական վերնախաւի, այլ ոյղուր եւ պարսիկ վաճառականների ու բարձրաստիճան պաշտօնեաների հետ¹³: Այս նոր ի-

12 МАРГАРЯН, А.Г., К вопросу о личности и деятельности "некоего Шагина", "Кавказ и Византия", вып. 3, Ереван, 1982, стр. 64-72.

13 Այս նոր միտումը քնութագրելու առումով յատկանշական են հետեւեալ փաստերը: Արցախի հզօր տիրակալ Հասան-Չալալը դստերն ամուսնա-

րադրույթեան պայմաններում Հարաւային Կովկասում իր դրսեւորումն էր գտնում բազմալեզուայնութիւնը՝ մինչ այդ բացարձակապէս նոր լեզուների ընդգրկումով: Իսկական պոլիգլոտ էր պատմիչ Ստեփանոս Օրբէլեանի հօրեղբայր Սմբատը, որը տիրապետում էր հայերէնին, վրացերէնին, պարսկերէնին, ոյղուրերէնին եւ մոնղոլերէնին¹⁴: Ընդ որում, եթէ մոնղոլերէնի իմացութիւնն անհրաժեշտ էր զօրահամանատարների հետ կապեր պահպանելու համար, ապա առանց պարսկերէնի եւ ոյղուրերէնի հնարաւոր չէր Օրբէլեանների իշխանական տան շահերը պաշտպանել դատական վէճերի ժամանակ: Լեզուների փայլուն իմացութիւնը եւ լաւ ըմբշամարտիկ լինելը (յայտնի է, որ ըմբշամարտը մոնղոլների սիրած սպորտաձեւն էր) վճռական դեր կատարեցին նաեւ հայ իշխաններից Սադուն Մահկանաբերդցու բարձրացման գործում՝ դարձնելով նրան Գիւրջիստանի վիլայեթի փաստական տիրակալը¹⁵: Հասկանալի է, որ տարբեր լեզուներ սովորելը աւելի մեծ չափով պէտք է շահագրգռէր յատկապէս վաճառականներին: Պատահական չէ, որ հայ առեւտրական Ասլանի որդի Սարգիսը 1352ին վրացական Դաւիթ Գարեջայի

ցրել էր մոնղոլական գլխաւոր արշաւամբի առաջնորդ Զարմադան մոլիմի որդու հետ (ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, Պատմութիւն Հայոց, աշխտ. ՄԵԼԻԿ-ՕՀԱՆՁԵԱՆ, Երեւան, 1961, էջ 391) եւ մոնղոլներից ետ էր ստացել հայրական տիրոջթնը՝ «այլ եւս յաւելուածով» (ամդ, էջ 269): Սակայն մրա եւ մոնղոլական գլխաւոր հարկահաւաք Արդունի քախումն 1261ին աւարտուեց Հասան-Ջալալի համար ողբերգական ելքով: Կիրակոս Գանձակեցիմ շեշտում է, որ Արդունիմ Հասան-Ջալալի դէմ գրգռում էին «տաճկահաւատքն», այսինքն՝ Արդունիմ ծառայող պարսիկ պաշտօնեաները: Ուստի եւ Ջաֆարեան իշխանուհի Խոջաբը շտապեց ամուսնանալ մոնղոլական ողջ պաշտօնէութեան ղեկավար, պարսիկ Սահիբ-Դիւան Շամսադ-Դիմ Զուվէյմիի հետ (տե՛ս MARGARYAN, H., *Khoshak-Khatun: An Armenian Princess in Iran*, in *Iran & Caucasus*, vol. III-IV, Tehran 1999-2000, pp. 157-158, ՄԱՐԳԱՐԵԱՆ, Հ., ԺԱ.-ԺԴ. դարերում հայ-իրանական կապերի պատմութիւնից (Սահիբ Դիւան Շամսադ-Դիմ Զուվէյմիմ եւ Հայաստանը), «Արեւելագիտական ժողովածոյ», հտ. Ե., Երեւան, 2004, էջ 111-125):

14 ՕՐԲԵԼԵԱՆ, Ս., Պատմութիւն տանն Սիսական, (հրտ. ԷՄԻՆ, Մ.) Մոսկվա, 1861, էջ 297:

15 ՄԱՐԳԱՐԵԱՆ, Հ., Մահկանաբերդցիների (Սադունեանների) իշխանական տունը ԺԲ.-ԺԴ. դարերում, «Հայկագեան հայագիտական հանդէս», հտ. ԺԸ, Պէյրութ 1998, էջ 22-25:

վանքում քառալեզուեան (տետրալինգուա) է թողել՝ հայերէն, վրացերէն, պարսկերէն եւ ոյղուրերէն լեզուներով¹⁶: Իլխանու-թեան դարաշրջանում առաւել սերտ դարձան բազմակողմանի կապերը յատկապէս պարսկական միջավայրի հետ: Մասնաւորապէս, խօսուին փաստեր եւն պահպանուել ազգամիջեան ամուսնութիւնների յաճախացման, առեւտրական ընկերութիւններում համատեղ գործունէութեան ծաւալման, պարսկական բանահիւսու-թեան՝ հայկական ու վրացական միջավայրում տարածում ձեռք բերելու վերաբերեալ:

Այնուամենայնիւ, տարանցիկ առեւտրի բնագաւառից զատ, դժուար է մատնացուցել մէկ այլ ասպարէզ, որտեղ ցցուն կերպով արտայայտուած կը լինէին «մոնղոլական գլոբալիզացիայի» դրական արդիւնքները: Ապրանքային արտադրութեան քայքայումը, քաղաքային կենտրոնների դերի նուազեցումը աստիճանաբար սպառնալից չափեր ընդունեցին: Դրութիւնն աւելի բարդացրեցին 1344ին իլխանութիւնում սկիզբ առած ներքաղաքական սուր բախումները, 1348ին իլխանութիւնում եւս տարածում գտած ժանտախտի սարսափելի համաճարակը՝ «սեւ մահը», որը կտրուկ վատթարացրեց բնակչութեան թուաքանակը: ԺԴ.-ԺԵ. դարերում կովկասեան մշակութային աշխարհի անկումը խորացաւ նաեւ քաղաքային կեանքի աւանդոյթների ընդհատման, քոչուորական տնտեսաձեւի բացասական ազդեցութեան եւ բնակչութեան զանգուածային արտագաղթի հետեւանքով: Այսպիսով, քաղաքական, տնտեսական եւ ժողովրդագրական խիստ անբարենպաստ գործօնները պայմանաւորեցին քոչուորական հասարակութեան յաղթանակը նստակեաց երկրագործական քաղաքակրթութեան նկատմամբ:

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐԵԱՆ

16 МУРАДЯН, П.М., *Армянская эпиграфика Грузии (Картли и Кахети)*, Ереван, 1984, стр. 184-186:

Summary

THE CAUCASIAN CULTURAL WORLD AND THE MONGOLS

HAYRAPET MARGARYAN

The XI-XIV centuries are the unique period in the Caucasus' medieval history with emerging complicated and contradictory relationships between two worlds, the local agricultural one and the incoming nomadic one. The Seljuk Turks had initiated unending inflow of nomadic masses. They were followed by the Mongols in the XIII century who were trailed by new tribes. The continuous influx of large groups of nomads became a serious impediment on the way to political consolidation and economical development of the «Caucasian cultural world».